Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Գրեց Սեմեոնովի

ՍԱՆՏԵՐԻ ԻՆԳՄԱՆԻ

# ԱՆՊՈՂՀՈՐԴԸ

Դինն է 2 կոպ.

ԲԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ"

1903

26.
220
220
30 MAY 2011
894.541
h-52
1001
4754

# Ա Ն Պ Ո Զ Հ Ո Ր Թ Ը

(Պատմուածք Սասնոյ Ռնգամանի)

Թարգմ. ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ։

Արտատպ. «Մուրճ» ամսագրից։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/III 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1903

26.04.2013
74.163
4973

# ԱՆՊՈՂ ՀՈՐԹԸ*)

Չի կարելի ասել, որ Պ. փոքրիկ քաղաքը Ֆինլանդիայի ամենաանշան քաղաքն էր։ Այնտեղ կայ տպարան, լրագիր է հրատարակւում, բայց չէ՞ որ կան այնպիսի քաղաքներ էլ, որոնք չունեն ոչ մէկը և ոչ էլ միւսը։ Եւ այդպէս, Պ. փոքրիկ քաղաքում հիմնուեց տպարան, այն էլ բոլորովին նոր և արտասահմանեան վերջին ձևով։ Մի բան միայն շատ մտատանջութիւն էր պատճառում նրա տէրերին, այն է՝ ոչինչ չը կար տպագրելու։ Լրագիրը շաբաթական միայն երկու անգամ էր լոյս տեսնում։ Մնացած օրերը տպարանը մատնուած էր անգործունէութեան, իսկ բանուորները, ռոճիկ ստանալով, թափառում էին դէս ու դէն, պարապութիւնից արբեցողութեամբ էին զբաղւում, գայթակղեցնում միւս բանուորներին և փոքրիկ քաղաքի խաղաղ բնակիչների դժգոհութիւնը գրգռում։

Հապա, ասացէք, խնդրեմ, մի՞թէ այդ կարգ է։

Բաժնետէրերն արդէն մի քանի անգամ ժողովուել էին միասին խորհրդակցելու այն կարևոր հարցի մասին, թէ ինչ տպագրեն։ Նրանք խորհեցին, դատեցին, վիճեցին, բայց չը կարողացան մի բան հնարել։ Շատ լաւ ծրագիրներ

*) Ֆինլանդական աշխարհի մի անկիւնի կեանքից վերցրած այս պատկերը պատկանում է ֆին բելլետրիստ՝ Ներկայումս «Päivälehi» ֆին ազգարնակութեան կուսակցութեան արմատական մասի լրագրի խմբագիր պ. Ինդմանի գրչին։ Թարգմանուած է ռուսերէնից։

— Ուրեմն մենք վճռում ենք, տպագրել պատկերազարդ այբուբենարանն։

— Այո՛, այո՛։

— Եւ պատկերները Գերմանիայումն ենք պատուիրում։

— Այո՛, Գերմանիայում։

Նախագահը մուրճով զարկեց, ցոյց տալու համար, որ վիճաբանութիւնները վերջացած են, և սրբեց իր ճակատի քրտինքը։ Փառք Աստուծու, վերջապէս մի վճիռ կայացրինք։

Ամենքն էլ թեթևութիւն զգացին, կարծես թէ մի լեռան չափ ծանրութիւն նրանց ուսերից վայր գլորուեց։ Ուրեմն մենք էլ մի բանի պէտքական ենք, ուրեմն մենք էլ խոտ արածողներից չենք։

Մի առ ժամանակ վէճերը և փոխադարձ դիմադարձութիւնները մոռացուեցին։ Կատարած պարտքի զգացողութիւնը և սեփական արժանապատուութեան գիտակցութիւնը բաժնետէրերի մէջ առաջացրին եռանդի մի արտասովոր հոսանք և նրանք անմիջապէս ընտրեցին մի կարգադրիչ մասնաժողով, որից յետոյ ամենքը միասին զնացին հիւրանոց բարի գործի սկիզբը ըմպելիով ցողելու։

Անցաւ մի ամսից աւելի։ Այբուբենարանը կազմեցին, այսինքն վերցրին հէնց առաջին՝ պատահաբար իրանց ձեռքըն ընկած հին օրինակը, տեղ-տեղ իրանցից աւելացրին մի քանի բան, բերել տուին պատկերները և նորից հաւաքուեցին՝ կարգադրիչ մասնաժողովի զեկուցումը լսելու։ Սեղանի վրայ դրուած էին Գերմանիայից հէնց նոր ստացուած կլիշեները, որոնք, ի հարկէ, ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեցին։ Ի միջի այլոց մի պատկեր ներկայացնում էր Յովսէփին՝ հօտն արածացնելիս։

— Նայեցէք, խնդրեմ, այս անասուններին, կարծէք մեր առջևը կենդանի լինեն կանգնած։



— Այո՛, իսկապէս։ Իսկ այս կայտառուն հորթն իր ցցած պոչով... Զարմանալի՜ է։

Ճշմարիտ և, մտիկ արէք... հորթը վազում է՝ պոչը կեռ ցցած։ Հրաշալի՜ է։

— Է՜, այդ արդէն չափազանցութիւն է։ Տարօրինակ երևակայութիւն է՝ հորթը ներկայացնել այդպիսի անվայել դիրքով։ Չեմ կարող ասել, թէ այդ յաջող միտք է եղել,—նկատեց պոստատան կառավարիչը, ուրախանալով, որ վիճաբանելու առիթ է գտել։

— Կատարեալ անտեղի հանաք յուրջ գործի մէջ,— աւելացրեց վերատեսուչը։

— Ո՛չ թէ միայն անտեղի, այլ ուղղակի անվայելուչ,—բարձրացրեց ձայնը ժողովրդական ուսուցիչ Պոսիոն։—Հանաք, որ սաստիկ դիպչում է մարդու զգեցիկի զգացմունքին և վիրաւորում է ամօթխածութիւնը։

— Այստեղ ի՞նչ անվայելուչ բան կայ... Պոչը պոչ է։ Վերև ցցած, թէ ներքև կախ ընկած, միևնոյն բանը չէ։ Ինձ պատկերը դուր է գալիս,—նկատեց կաշուեգործ Նիրանէնը։

— Իսկ ինձ ամենևին դուր չէ գալիս։ Չեմ հասկանում, այբուբենարանի համար ինչպէս կարելի է նկարել այդպիսի լկտի բաներ։—Վերատեսուչն արհամարհական կերպով ձգեց սեղանի վրայ կլիշէն։—Այդպիսի բաներ,— նա մատը տնկեց կլիշէի վրայ ճիշտ այն տեղում ուր հորթի պոչն էր,—այդպիսի բաները չի կարելի տպագրել այբուբենարանում։ Ես առաջարկում եմ մերժել նկարը։

— Այդ բանին ես համաձայն չեմ,—հակաճառեց վաճառական Ռիխկոնէնը։ Նկարները մենք ենք Գերմանիայում պատուիրել, դրանց համար փող ենք վճարել, և այն էլ ոչ քիչ,—ինչո՞ւ մեր փողերը իզուր կորչեն։ Եթէ անպատշաճ է հորթը ցցած պոչով ներկայացնել, ապա ուրե-

մին մենք կը ձեակերպենք առանց պոչի... Չէ՞ որ այդ անելը դժուար չէ։

— Այդ ինչ կը դառնայ... կը ստացուի անպոչ հորթ.—հարցրեց շուարուած մագիստրոսը, գլուխը չբարձրացնելով արձանագրութիւնից։

— Է՞, թէպէտ հէնց այդպէս։ Բայց և այնպէս նկարը վայելուչ կը լինի։

— Մի՞թէ մենք տպագրում ենք... անպոչ հորթը... Նախագահը չփոթուեց, չիմանալով, թէ ինչ կերպով դնի հարցը ձայնատուութեան։

Տեղից վեր է կենում բժշկապետը։

— Պարոններ, այդ վէճը միտք չունի։ Արուեստագէտը նկարել է ջահիլ, աշխոյժ կենդանին իսկ և իսկ այն վայրկեանում, երբ նա, համակուած ուրախութեան յանկարծակի բռնկումով ցատկոտում է դաշտում, մարմնի տարօրինակ շարժումներ անելով։ Կենսուրախ զգացմունքը պատանեկութեան յատուկ է։ Ցնծութեան յանկարծական բռնկումներ հորթերին յատուկ են, (այստեղից—«հորթային հրճուանք»)։ Ուրախութեան այն արտաքին արտայայտութիւնները, որոնք մեզ անվայել են թւում ոչ մի ամօթալի բան չեն պարունակում, որովհետև բնական են, անարատեստ։ Նկարիչը պարտաւոր էր ձեակերպել հորթը պոչը ցից, որովհետև դա բնական է։ Նա դրանով երևան է հանել նուրբ դիտողութեան ընդունակութիւն, կենդանի իմօր։ Եթէ որ, հետևելով կեղծ ամօթխածութեան, նա ներկայացնէր կայտառ հորթը պոչը կախ, այն ժամանակ նա կը մեղանչէր գեղարուեստական ճշմարտութեան դէմ, իսկ նրա արտադրութիւնը կը կորցնէր իր անկեղծութեան, ճշմարտութեան, իրականութեան ամբողջ գրաւչութիւնը։ Տարօրինակ է այդպիսի բան մերժելը, իսկ առաւել ևս տարօրինակ է հորթը պոչից զրկելը։



— Ինչ վերաբերում է իրական լինելուն, այդ մասին ես չեմ վիճում։ Պատկերն արդարև շատ իրական է,—ասաց վերատեսուչը, սկսելով տաքանալ։—Բայց այդ գովաբանուած ռէալականութիւնը ներկայ դէպքում արդեօք յարմար է գալիս։ Ձունը իր լուանները է քթթթում, խոզը թաւալւում է ցեխի մէջ,—չէ՞ որ սրանք էլ զուտ իրական նիւթեր են, բայց թոյլ տուէք հարցնել, արդեօք սրանք յարմար նիւթեր են գեղարուեստական երկերի համար։ Արդեօք այդ գեղարուեստական կերակուրն երեխաների, մեր ժողովրդի երեխաների համար, առողջարար է։

— Է՞, ասենք այդքան էլ հեռու չի կարելի գնալ,—հակաճառեց պոստատան կառավարիչը, որին հորթի պոչի մասին յարուցած բոլոր վէճը՝ այնքան էլ լուրջ բան չէր թւում։ Այդպիսի չնչին բաներին նշանակութիւն չը ընծայեմ։ Մի՞թէ գիւղացի երեխաները ոչ մի անգամ չեն տեսել պոչերը ցից հորթեր։ Եւ նրանք հոմարեա ամենայն օր են տեսնում այդ, և դրանից ոչ մի վատ բան չի գուրս գալիս։

— Ինչպէս, դուք ուզում ընդունում էք, որ այդ պատկերի մէջ ոչ մի անպատկառ բան չը կայ։ Ներեցէք... իմ խորին համոզմունքն է, որ մենք գլխիվայր ենք հասկանում մեր պարտականութիւնները։ Հարիւր անգամ աւելի լաւ կը լինէր ամենևին այբուբենարան չը տպագրել, և առհասարակ աւելի լաւ կը լինէր ոչ մի գիրք չը տպագրել, քան տարածել համանման ցեխ։ Ո՞ւմ ենք մոլորեցնում։ Մաքուր մանկական հոգիներին։ Ո՞րտեղ ենք մրացընում բարքերի ազնիւութիւն։ Մեր ժողովրդի անարատ սիրտը։ Կարծես թէ մենք նպատակ ունենք քանդել այն բարոյական հիմքերը, որոնց վրայ կառուցւում է ազգի ապագան։

— Ի հարկէ, այդ մի քիչ անվայելուչ բան է, որ հորթը ցցել է պոչը,—դրանում և կաշուեզործը համաձայն

էր։—Բայց,—շարունակեց նա,—ախր չէ՞ որ այդ յիմար երկշաբաթական հորթ է, որից շատ բան պահանջել չի կարելի։ Եթէ դա լինէր օրինակ կով կամ եզ, այն ժամանակ ուրիշ բան է։ Իսկ հորթ, դա ոչինչ...

— Ոչ, ոչինչ չէ,—հակաճառեց հարկահանը։

— Ցոյց տուէք երեխաներին այդպիսի նկար,—նրանք ինչպիսի հասկացողութիւն կը կազմեն վայելչութեան և բարեկրթութեան մասին։

Ես արդէն ասացի, որ դրանք դատարկ բաներ են,—նորից միջամտեց բժշկապետը։ Արժէ՞ արդեօք ամբողջ մի ժամ վիճաբանել այդպիսի յիմար բանի մասին և ներս խոթել այստեղ բարոյականութեան հարցեր... Հանգիստ թողնենք այդ հորթը։ Ստուած նրա հետ, թող այրուբենարանի մէջ չը մտնի։ Աւելի լաւ է խօսենք որ և է աւելի հետաքրքիր բանի մասին։ Մենք չէ՞ որ ուրիշ շատ, աւելի կարևոր գործեր ունենք։

— Հարցը հորթի մէջ չէ, այլ սկզբունքի, այն իդէալների, որոնցով մեր բաժնետիրական ընկերութիւնը պիտի առաջնորդուի իր լուսաւորութեան գործի ընթացքում։—Վերատեսուչն աւելի բորբոքուեց։—Կասեմ աւելին, այստեղ հանդիպել են իրար երկու աշխարհահայեցողութիւններ։ Եւ մեր խաղաղ երկրումն էլ է սկսում բռնկուել կռիւն ազնիւ իդէալիզմի և այն ուղղութեան մէջ, որը նատուրալիզմ անմեղ անուան տակ իսկապէս քօղարկում է խորին ապականութիւն։ Իմ բարոյական պարտքս եմ համարում նախազգուշացնել ընկերներիս այդ մահաբեր թոյնից, որը հեշտութեամբ կարող է թունաւորել և փչացնել մեր դեղեցիկ գործը։

Բժշկապետը սթոռի վրայ սկսեց կուչ գալ։ Նախագահը նկատեց այդ և կարևոր համարեց վիճաբանութիւնն ընդհատել։

— Ներեցէք, պարոններ, դուք շատ չեղուեցիք հար-



ցից։ Այդպէս մենք երբէք չենք վերջացնիլ։ Հարցը դնենք։ Եթէ ես չեմ սխալւում, առաջարկուած է երկու ծրագիր. ոմանք ցանկանում են, որ չարաբաստիկ պատկերն ամենևին չը տպագրուի, ոմանք էլ ընդունում են, որ կարելի է տպագրել, բայց առանց պոչի։ Սակայն, երկրորդ ծրագիրը, թւում է թէ, չի գտել բաւականաչափ կողմնակիցներ։

Այդ ժամանակ հարկահանը ձայն խնդրեց։

— Հէնց այդ ծրագրի կողմնակից եմ, թէպէտ և, կարելի է, որ ես առիթ չունեցայ որոշակի յայտնել իմ կարծիքը այդ մասին։ Բոլոր դժբախտութիւնը պոչի մէջ է. հէնց այդտեղ է միայն անպատշաճութիւնը։ Բայց դրա համար չարժէ այրուբենարանից դուրս հանել Ցովսէփի և իր հօտի կրթիչ պատկերը։

Կաշուեգործ Նիրանէնը, իսկ նրա հետ միասին և պոստատան կառավարիչը, բողոքում էին անպոչ հորթի կողմնակիցների դէմ։ Վէճը նորից բռնկուեց։ Ժողովրդական ուսուցիչը դարձեալ սկսեց ճառել բարձր նիւթերի և այն վտանգների մասին, որոնք, եթէ միայն տուած փաստի բոլոր հետևանքները նախատեսուի, վնաս են սպառնում ժողովրդին և հայրենիքին։ Վերատեսուչը նատուրալիստների դէմ արտասանած ճառով նրանց ջարդ ու փշուր արեց և բորբոքուած ասաց, որ կոպտութեան պաշտպան մարդիկ թէպէտ և զաճաճ են, բայց առաւել ևս երևան են հանում ամօթխածութեան բացակայութիւն և դատելու անընդունակութիւն այն բանի մասին՝ թէ ինչ է հնարհալի, ինչը՝ ոչ։

Բժշկապետը կրակ կտրեց։

— Իսկ այն մարդը, որ կարմրում է պոչը տեսնելիս, երևան է հանում չափազանց կասկածելի բարոյականութիւն։ Ժողովրդի, իսկ առաւել ևս երեխաների երևակայութիւնն առողջ է։ Ապականուած է միայն նրանց երևակայութիւնը, որոնք տհաճութեամբ երեսները շուռ են տալիս՝

պոչը վերև ցցած հորթից։ Այդ արդէն չափազանցութիւն էր։ Նախագահն ընդհատեց վիճաբանողներին և խնդրեց նրանց ոտք չը դնել անձնական հողի վրայ։ Բայց վերատեսուչն արդէն գլխարկը վերցրել էր։ Հրաժեշտ տալիս՝ նա մեղմ, կարծես թէ խղճած ձայնով արտասանեց մի քանի սրտաբուղխ խօսքեր այն մասին, թէ ինչպէս նրա համար ծանր է տեսնել, որ այնպիսի գեղեցիկ պտուղներ խոստացող գործը ստացել է կորստաբեր ուղղութիւն։ Նա թօթափում է իր ոտների փոշին։ Նմանապէս նա չի կարող անդամ մնալ այն ընկերութեան, որտեղ թոյլ են տալիս վիրաւորել այն մարդկանց, որոնք համարձակ և աղնուաբար արտայայտում են իւրեանց համոզմունքները։ Իսկ ինչ վերաբերում է վիրաւորողին՝ նա դատաստանի առջև նրանից հաշիւ կը պահանջի։ Նա դուրս գնաց, իսկ նրա յետևից դուրս եկան ժողովրդական ուսուցիչը և հարկահանը։ Մնացողներին տիրեց մի ծանր զգացմունք։ Թւում էր նրանց, թէ հողը իրանց ոտների տակ օրօրւում է։ Իրանց ընկերութեան ապագան, որ մի քիչ առաջ վարդագոյն լուսով էր ներկայանում աչքերին, յանկարծ անյայտութեան մառախուղով ծածկուեց։ Եւ այդ բոլորը մի ինչ որ հորթի պոչի կամ անպոչ հորթի համար։

Վիճաբանութիւնները նորից արծարծելու մասին մտածելն անդամ աւելորդ էր։ Վտանգաւոր էր բարձրացնել վիճելի հարցը, որ յանգում էր երկու կամ աւելի ճիշտ երեք հակասական վճիռների։ Այդ կարող էր վերջնականապէս կործանել ընկերութիւնը։ Գործը յետաձգուեց երկրորդ նիստին, աւելի նրա համար, որ արդէն ուշ էր։ Դաշուեզործի խորհրդի համաձայն խնդիրը պարզելու համար վճռեցին հարցնել ձեռնհաս և գործի մէջ չը-շահագրգռուած անձանց՝ ինչպէս օրինակ քաղաքագլխի և քաղաքային պաստօրի կարծիքը։ Քաղաքագլուխը պատասխանեց, որ Գ. քաղաքի բնակիչները, ի հարկէ, մի քիչ կը



խռովուէին, եթէ տեսնէին հրապարակում վիճելի նկարի նման մի տեսարան։ Բայց, ուշադրութեան առնելով, որ պատկերը ժողովրդի համար է նշանակուած, իսկ ժողովուրդն այդքան էլ մանրակրկիտ չէ, նա կարծում է, որ այդ կարելի է ուշադրութեան չառնել։ Պաստօրը անորոշ կերպով պատասխանեց,— որ ոչ Աստուածաշնչում, ոչ էլ եկեղեցական կանոնադրութիւնների մէջ չէ կարող պատասխան գտնել տուած հարցին։

Խորհեցին և վճռեցին, որ պատկերը կարելի է տալ իրաւաբանական յայտնի սկզբունքի հիման վրայ, որով թոյլատրելի է համարւում այն բոլորը, ինչ որ օրէնքով չէ արգելուած։

Այդպէս էլ արին։ Այրուբենարանը լոյս ընծայեցին հորթի պատկերով, հորթն էլ մնաց պոչով։ Բայց վերատեսուչը, ժողովրդական ուսուցիչը և հարկահանը վերցրին իրանց վրայից ամեն մի պատասխանատուութիւն այդչափ թեթեամիտ արարքի հետևանքների համար։

Նրանք վաճառեցին իրանց բաժինները։

Բագուի Հայոց Հոգեւոր-Հիմնական Դպրոց
Եկեղ.-Ծխակ. (Հոգեւոր)
Հանրային Գրադարան
Общественная Библиотека
7/XI-1922
Հանրային Գրադարան
Общественная Библиотека
Հանրային Գրադարան
Общественная Библиотека
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0376288

74.163

894.541
Ñ-52